

ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/2
17 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Տիգրան Ումրոյանի բողոքը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 31.05.2014 թ-ի թիվ 311 որոշման դեմ:

Ա/Ձ Տիգրան Ումրոյանի բողոքում բերված փաստարկները.

Երևան քաղաքի Մաշտոցի հարկային տեսչության պետի կողմից 31.05.2014 թ-ին կայացվել է թիվ 311 որոշումը, որի համաձայն Ա/Ձ Տիգրան Ումրոյանից ենթակա է գանձման 2009 թ-ի նոյեմբերից մինչև 2011 թ-ի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածի համար նախատեսված չվճարված սոցիալական վճարների 167.916 դրամ գումար, ինչպես նաև 274.836 դրամ 2009 թ-ի եկամտահարկի գումար:

Ա/Ձ Տիգրան Ումրոյանը գտնում է, որ նշված որոշումը հակասում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի և անվավեր է: Մասնավորապես.

2010 թ-ից Ա/Ձ Տիգրան Ումրոյանն օրենքով սահմանված կարգով դադարեցրել է իր գործունեությունը: Այդ կապակցությամբ հայտնվում է, որ նույնիսկ եթե մի պահ ընդունենք, որ Ա/Ձ Տիգրան Ումրոյանը թույլ է տվել հարկային օրենսդրության խախտումներ և ունեցել է չկատարված հարկային պարտավորություններ, ապա Մաշտոցի հարկային տեսչությունը պարտավոր էր իր լիազորությունների շրջանակներում վերացնել Ա/Ձ Տիգրան Ումրոյանի կողմից թույլ տրված հարկային օրենսդրության խախտումները և ձեռնարկել համապատասխան գործողություններ չվճարված հարկային պարտավորության գումարները գանձելու ուղղությամբ: Մինչդեռ ակնհայտ է, Մաշտոցի հարկային տեսչությունը դրսևորել է անգործություն:

Դրա հետ մեկտեղ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածը սահմանում է, որ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

Ասվածից հետևում է, որ Մաշտոցի հարկային տեսչությունը Ա/Ձ Տիգրան Ումրոյանի կողմից թույլ տրված Հարկային օրենսդրության ենթադրյալ խախտումները հայտնաբերել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Տիգրան Ումրոյանը խնդրում է անվավեր ճանաչել Մաշտոցի հարկային տեսչության պետի կողմից 31.05.2014 թ-ին կայացված թիվ 311 որոշումը:

« Հանձնաժողովի նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

« ՀՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ՀՆ Մաշտոցի հարկային տեսչության պետը, քննարկելով Ա/Ձ Տիգրան Ումրոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 31.05.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Տիգրան Ումրոյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 442.752 դրամ, որից եկամտահարկի գծով պարտավորությունները՝ 274.836 դրամ, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները՝ 167.916 դրամ:

Եկամտահարկի գծով պարտավորություններն առաջադրվել են 2009 թ-ի գույքի և եկամուտների հայտարարագրի հիման վրա, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները հանդիսանում են 2009 թ-ի նոյեմբերից մինչև 2011 թ-ի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված նվազագույն սոցիալական ապահովության վճարների գումարները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածների դրույթներով ՀՀ ՀՆ Մաշտոցի հարկային տեսչության պետը 31.05.2014 թ-ին ընդունել է թիվ 311 որոշումը Ա/Ձ Տիգրան Ումրոյանից 442.752 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ Ա/Ձ Տիգրան Ումրոյանը պետական ռեգիստրի գրանցման վկայականը 30.04.2011 թ-ին ի պահ է հանձնել Մաշտոցի հարկային տեսչություն: Սակայն, նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները հաշվարկվել են 2009 թ-ի նոյեմբերից մինչև 2011 թ-ի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածի համար: Հետևապես, պետական ռեգիստրի գրանցման վկայականն ի պահ հանձնվելու հանգամանքը չէր կարող հիմք հանդիսանալ նվազագույն սոցիալական ապահովության վճարների գումարները չհաշվարկելու համար: Ինչ վերաբերվում է եկամտահարկի գծով գանձման առաջադրված 274.836 դրամին, ապա այն առաջացել է Ա/Ձ Տիգրան Ումրոյանի կողմից հարկային տեսչություն ներկայացված 2009 թ-ի գույքի և եկամուտների հայտարարագրի հիման վրա:

Վերոգրյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ Ա/Ձ Տիգրան Ումրոյանի եկամտահարկի և սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունները հարկային մարմնի կողմից ոչ թե նոր են հայտնաբերվել, այլ դրանք հայտնի են եղել առաջացման իսկ օրվանից: Հետևաբար բողոքում բերված պնդումները՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի հիմքով հարկային պարտավորություններ չառաջանալու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

« ՀՆ Մաշտոցի ՀՏ պետի 31.05.2014 թ-ի թիվ 311 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ